Մարզպետը շնորհավորանքի խոսք է հղել Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ

01.10.2019

Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ ի սրտե եւ լավագույն ցանկություններով շնորհավորում եմ մեր ավագ սերնդի ներկայացուցիչներին՝ անչափ կարեւորելով նրանց անուրանալի դերակատարումը մեր կյանքում, մերօրա հաջողությունների եւ ձեռքբերումների գործում:

Սիրելի տատիկներ եւ պապիկներ, դուք ձեր տարիների վաստակով երջանիկ ծերություն ունենալու, արժանապատիվ կյանքով ապրելու մեծ իրավունք եք վաստակել: Հավատացած եղեք, որ այսօր մեր իշխանություններն անում են հնարավորը՝ ձեզ արժանին մատուցելու, ձեր կյանքն ու կենցաղն առավել բարեկեցիկ դարձնելու համար:

Կրկին շնորհավորելով ձեզ այս հաճելի օրվա առթիվ՝ ցանկանում եմ քաջառողջություն եւ տոկունություն:
Ամենայն լավն ու բարին բոլորիդ: